

սով, բոլոր փաստերը ցոյց կու տան Գեշանը իբր հիւսուածատեղի (Արտեպիլի գորգին)»⁽³²⁾ :

Առարկութիւններս չառ են վերի եզրակացութիւններուն զէմ: Հեղինակը ինքն իսկ կ'ըսէ թէ «Թուրք եւ Հնդկի արքունեաց գորգերը ուղղակի Պարսիկ օրինակներէ ծագած էին: Պարսիկ հիւսողներ ներկայացուցած էին արուեստը Թուրքերուն՝ իբր պատերազմական դերիներ, իսկ Հնդկիներուն՝ իբր բարձր կերպով վճարուած եւ պատուուած վարպետներ»⁽³³⁾: Ուրեմն կարելի էր գորգագործ վարպետներ, իբր դերի, իբր վարձկան, ճիշտ ինչպէս որ բոլոր ուրիշ տեսակ արհեստաւորներ կը փոխադրուէին:

Գործնական տեսակէտով աւելի հեշտ էր վարպետներ փոխադրել քան թէ չինուած մեծածաւալ եւ ծանրածանր գորգ մը: Արտեպիլի գորգը երեսունէնչորս ու կէս ոտք երկար եւ տասնեւեօթ ու կէս ոտք լայն, ահապին կտոր մըն էր, քառակուսի ինճէզին 325 կապով, բուրդէ, անտարակոյս խնամքով դժուած եւ ծրագրուած էր նախ քան անոր շինուիլը, ներկուած բուրդը կարելի էր հարկ եղած տեղը պատրաստել եւ այնպէս գործուելու տեղը բերել, ինչպէս նաեւ լաւագոյն հիւսողներ Պարսկաստանի ամէն կողմերէն բերել տալ, որպէսզի գորգը պատրաստուած դժագրութեան համեմատ եւ հայթայթուած գոյներով շինուի, որով Փոփի վերոյիշեալ առարկութիւնները անհիմն են ու անտեղի:

Տարակոյս չկայ որ մինակ Մաքսուտի մը Ֆիլիքական կարողութենէն վեր է նման գորգի մը շինութիւնը իր կենաց շրջանին մէջ, ձգենք նաեւ նիւթական այն ահապին պահանջները որ կը պարտադրէր նման գործ մը զլուխ հանելու համար: Մաքսուտ, եթէ ինքը չինած էր գորգը, պէտք է որ իշխանական հարստութեան տէր եղած ըլլար նման գորգ մը կարենալ շինելու եւ կամ նոյնիսկ շինել տալու եւ Արտեպիլի մզկիթին նուիրելու: Եթէ ինքը չէր Մեկենասը եւ մինակ գորգին շինողն էր՝ այն ատեն ի՞նչպէս կը համարձակէր ինքզինքը միայն յիշել եւ իր մեկենասը մոռնալ: Եթէ արքունի գործ մըն էր ասիկա, այն ատեն հոն Շահ Իսմայիլ Ա.ին կամ Շահ Թահմասպի յաջորդին անունը յիշատակուած պէտք էր ըլլալ գորգին վրայ: Դժբախտաբար ո՛չ մէկ տեղեկութիւն ունինք թէ ո՞վ էր Գեշանցի Մաքսուտ, բացի անկէ՝ որ գորգին մէջ կը յիշուի: Նման գորգ մը նախապէս չէր կրնար շինուիլ, ապա գտող մը գտնելու համար, այլ ասպարանքի արդիւնք միայն կրնար ըլլալ. ուրեմն յիշատակարանն ալ ըստ այնմ հարկ եղած ծախսութիւնները պէտք էր ունենար:

Արտեպիլի գորգէն աւելի հին գորգ մըն է Իտալիոյ Մարկարիզա

(32) Catalogue of a loan Exhibition of Early Oriental Carpets. — The Art Club of Chicago, 1926, p. 37-39.

(33) Անդ, էջ 18: